ԱՐՄԵՆՈՒԴ ՌԱՍԱՅԱԿԱՆ ՏԻՊԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ

ՔՈՉԱՐ Ն. Հ.

Հայկական լեռնաշխարհը վերաբերում է Էյկումենայի այն շրջաններին, որոնք համարվում են ոչ միայն հնագույն մարդկանց բնակեցման ու տարածման գոտիներ, այլև ներկայանում են որպես մարդկության նախահայրենիք: Լեռնաշխարհի և հարակից շրջանների տարածքներից կապկամարդկանց, հնագույն և հին մարդկանց ոսկրային մնացորդների գտածոները բավարար ապացույցներ են Homo Sapiens-ի ծագման և կազմավորման գոտու մեջ Հայկական լեռնաշխարհը ներգրավելու համար, որը նաև մարդկային ռասաների հարավեվրոպեոիդ ճյուղի կազմավորման բնօրրան է: Թեև այս վարկածը կասկածի են ենթարկում որոշ գիտնականներ, սակայն այսօր կուտակված փաստացի նյութերը մեզ մոտեցնում են լայն մոնոցենտրիզմի այն տեսակետին, ըստ որի ժամանակակից մարդու կազմավորման գոտու մեջ պետք է ներառել Հյուսիսարևելյան Աֆրիկան, Առաջավոր Ասիան, Կովկասը, որոշ չափով՝ Միջին Ասիան: Homo sapiens-ի ծագման և կազմավորման շրջանը բավական լայնատարած էր և ընդգրկում էր հին մարդու լոկալ տիպերի մի քանի արեալներ[1]: Սակայն վերջին տասնամյակների ընթացքում Աֆրիկա մայրցամաքի պեղումներից հայտնաբերված ավստրալո-պիտեկների բազմաթիվ ոսկրանյութերը որոշ գիտնականների բերեցին այն համոզման, որ մարդու ծագման նախահայրենիքը պետք է փնտրել միայն Հարավային և Արևելյան Աֆրիկայի տարածքներում[2]:

Ընդհանրապես մարդու ծագման բարդ ու խճճված խնդրում որոշիչ դեր են խաղում պեղումներից ստացված ոսկրանյութերը, որոնք մինչև օրս բավարար չեն անհերքելի եզրահանգումների համար, որովհետև, ինչպես հայտնի է, հնագիտական երկարատև պեղումները, բացի օբյեկտիվ խոչընդոտներից, առնչվում են նաև նյութական մեծ ծախսերի ու պեղումների հաջողակության հետ:

Այնուհանդերձ, հնագույն մարդկանց գործունեության հետքերի բազմաթիվ փաստացի ապացույցների կուտակումը մեր օրերում, ինչպես նաև էվոլյուցիոն զարգացման տարբեր ձևերի ոսկրային մնացորդները կասկած չեն հարուցում և

---

[1] Рогинский Я. Я., Левин М. Г. *Антропология, М., 1978, с. 483-493.*

[2] Джохансон Д., Иди М. Люси. *Истоки рода человеческого, М., 1984.*

համոզում են, որ Հայկական լեռնաշխարհը՝ որպես արեալի կենտրոնական մաս, պետք է մտցնել Բանական մարդու կազմավորման գոտու մեջ:

Կայնոզոյի երրորդական ժամանակաշրջանը Առաջավոր Ասիայի և Կովկասի տարածքներում ներկայացված է դեռևս եզակի գտածոներով: Հարավարևելյան Կախեթում՝ Ուդաբնո գյուղի մոտ, 1939 թ. հայտնաբերվել են մարդանման կապկի մնացորդներ, որոնք ժամանակագրվում են վերին միոցենով: Այդ արարածին կոչեցին ուդաբնոպիտեկ: Գտածոն շատ մեծ նշանակություն ունեցավ, որովհետև մինչև այդ Արևելյան Եվրոպայում և Արևմտյան Ասիայում ոչ մի նմանօրինակ գտածո հայտնաբերված չէր: Փոքր Ասիայում՝ Անկարայից ոչ հեռու, վերին միոցենի շերտերում 1955 թ. հայտնաբերվել է խոշոր մարդանման կապկի ստորին ծնոտը: Այս անհատն էլ կոչվել է անկարապիտեկ[3]:

Չորրորդական ժամանակաշրջանը Հայկական լեռնաշխարհում և հարակից շրջաններում ներկայացված է ավելի բազմաթիվ և բազմաբնույթ գտածոներով: Նեանդերթալյան մարդկանց և նրանց մերձավոր ձևերի հայտնաբերումն իրականացվել է նկարագրվող տարածաշրջանի տարբեր մասերում:

Պալեոլիթի աշելյան ժամանակաշրջանին է վերաբերում Ազոխի մարդը՝ հայտնաբերված 1968 թ., Արցախի Հադրութի շրջանի Ֆիզուլի քաղաքի մոտ գտնվող Ազոխի քարանձավում: Գտնված հոմինիդի ստորին ծնոտի ուսումնասիրումը հետազոտողներին բերել է այն համոզման, որ տվյալ արարածը պատկանում է պալեոանտրոպների դասին[4]: Ժամանակակից Հայաստանում՝ Զովունի գյուղից ոչ հեռու, Հրազդան գետի կիրճում, 1969 թ. բացվել էր մի քարանձավ, որտեղից հնեամարդաբան Հ. Ազիզյանը հայտնաբերել էր մարդանման էակի ոսկրային մնացորդներ: Դրանք կրծոսկրի, աջ անրակոսկրի, քունքոսկրի, նստոսկրի, կողոսկրերի, ողների ու մատների ֆալանգների մնացորդներ էին: Ոսկրանյութերն ուսումնասիրել են Մոսկվայի համալսարանի մասնագետները, և հաստատվել է, որ մնացորդները պատկանում են նեանդերթալյան մարդուն[5]:

Հայաստանի Նախիրի շրջանում՝ Զովունի գյուղից 0.7 կմ դեպի հյուսիս, Հրազդան գետի աջ վտակը կազմող Եղվարդ գետի ափին, տեղավորված է Համո-1 քարայրը: Քարայրում՝ 150-177 սմ խորության մեջ, գտնվել է հոմինիդների երկու կմախք և մեկ կնոջ գանգ: Այդ ոսկրանյութերի ժամանակագրումը և ուսումնասիրումը կատարել է Ա. Պ. Օկլադնիկովը, որը նրանց տարիքը հասցրել է 300000-ից 150000 տարվա[6]:

---

[3] **Рогинский Я. Я.**, **Левин М. Г.,** *նշվ. աշխ., էջ 190-191:*

[4] *Նույն տեղում, էջ 274:*

[5] **Азизян Г. А.** *Следы антропоида в пещере Зовуни (Тезисы докладов к IV всесоюзному совещ. по изучению четвертичного периода, Е., 1973, с. 120-122).*

[6] **Ազիզյան Հ.**, *Բրածո մարդը և նրա էկոլոգիան Հրազդանի կիրճի քարայր-կացարաններում [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), N 2, (97), 1982, էջ 162-172]:*

1975 թ. ամռանը Երևանի կենտրոնում՝ Հրազդան գետի ձախ ափին գտնվող կիրճում (Կոնդ), Ա. Տ. Ասլանյանը, Յու. Վ. Սայադյանը և Բ. Պ. Մամոտը հայտնաբերել են հնադարյան մարդու գանգի երկու հատվածներ: Նույն տեղում 1976 թ. հայտնաբերվել են գանգի ևս 101 հատվածներ, որոնցից 38-ը՝ բավական խոշոր: Բոլոր ոսկրերը տեղափոխվել են Մոսկվայի համալսարանի մարդաբանության ինստիտուտ՝ վերականգնման նպատակով: Այդ գանգը, բացի ժամանակակից մարդու համապատասխան հատկանիշներից, օժտված է եղել նաև արխայիկ հատկանիշներով: Ուսումնասիրողները մի շարք համոզիչ փաստարկներով ապացուցում են, որ գանգի հայտնաբերման շերտի տարիքը հասնում է 300000 տարվա:

1925 թ. նույնպես Հրազդանի կիրճում, Ծիծեռնակաբերդի մոտ հնագետ Քալանթարը գտել է մարդու կմախք: Ծիծեռնակաբերդի մարդուն Քալանթարը որակել է որպես կրոմանյոնյան և նեանդերթալյան մարդու միջանկյալ տիպ: Թեև գիտնականներից ոմանք կասկածելի են համարել գտածոյի ժամանակագրումն ու նեանդերթալյան հատկանիշները, սակայն հարցը մինչև օրս վիճելի է, որովհետև ոսկրանյութի արխայիկ հատկանիշները բավական զգալի են[7]:

Շշարունակելով ոսկրանյութերի մանրամասն նկարագրումը՝ թվարկենք միայն, որ նեանդերթալյան մարդկանց մնացորդներ հայտնաբերվել են նաև Օսեթիայում (Կուդարո-1 քարայր), Ադլերում (Սիշտիրի քարայր), Պաղեստինի տարբեր շրջաններում (Մուգարեթ-էլ-Զութիյե, Շուկբա, Մուգարեթ-էթ-Թաբուն, Մուգարեթ- էս-Սհուլ քարայրները), Իրաքյան Քրդստանի Զագրոսի լեռներում (Շանիդարի քարայր), ժամանակակից Թուրքիայի տարածքում՝ Մարաշի վիլայեթում (հայկական Տավրոսի արևմտյան ծայրամասում), Խաթայի և Անթալիայի վիլայեթներում (Կարաին քարայր), Հյուսիսային Իրանում (Խոթու քարայր), Կասպից ծովի հարավարևելյան մասում (Գար-ի-Քամարբանդ քարայր) և այլուր[8]: Վաղ պալեոլիթի որոշ մասնագետներ կարծում են, որ Անատոլիայի, Պաղեստինի և Առաջավոր Ասիայի այլ շրջանների հնագիտական ուսումնասիրությունները թույլ են տալիս քննարկելու այս ռեգիոնը որպես հնագույն մարդկանց սկզբնական տարածման խաչմերուկ[9]:

Անցնելով ավելի ուշ դարաշրջաններին՝ մեզոլիթի տարբեր ժամանակահատ-վածներին, տեսնում ենք, որ ոսկրային գտածոների քանակը զգալիորեն մեծանում է, իսկ նեոլիթն ու բրոնզե դարն արդեն չափազանց հարուստ են ոսկրանյութերի քանակի և բնակավայրերի տարածման տեսակետից:

---

[7] **Дебец Г. Ф.** *Палеоантропология СССР, М.-Л., 1948, с. 391.*

[8] **Рогинский Я. Я.**, **Левин М. Г.,** *նշվ. աշխ., էջ 267-276:* **Solecki R**. *Shanidar Cave. A Palaeolithic Site in Northern Iraq, Smith Son Report for 1954, Washington, 1955, pp. 28-41.* **Коробков И. И.** *Новые данные о неандертальских скелетах из пещеры Шанидар (Ирак) (Вопросы антропологии, вып. 15, 1963, с. 123-138).* **Senyurec M.** *The Skeleton of the Fossil Infant Found in Shenidar Cave, Northern Iraq, Ankara, 1957, p. 91.*

[9] **Любин В. П.** *Палеолитические пещерные стоянки и остатки палеолитического человека в Турции (Вопросы антропологии, вып. 9, 1962, с. 122-127).*

Մեզոլիթյան ոսկրանյութերը բազմաթիվ են ժամանակակից Իրանի տարածքում: Խոթու քարայրում հայտնաբերվել են հինգ անհատների ոսկրանյութեր, որոնք պատկանում են կրոմանյոնյան տիպին: Գար-ի-Կամարբանդ քարայրում գտնվել են 12-13 տարեկան աղջկա մնացորդներ: Միջերկրական ծովի հարավարևելյան ափին ոսկրանյութեր են հայտնաբերվել Շուկբա քարայրից (45 անհատ) և Կարմել սարի քարայրներից (87 անհատ): Այդ կրոմանյոնցիները օժտված են եղել հարավային եվրոպեոիդներին բնորոշ հատկանիշներով:

Ավելի ուշ ժամանակաշրջանների՝ նեոլիթի և էնեոլիթի գտածոներն առավել ճշգրիտ են ժամանակագրված և վկայում են Առաջավոր Ասիայի և Անդրկովկասի շրջաններում արտահայտված եվրոպեոիդ ռասայի տարածման մասին: Դրա վառ ապացույցն են բազմաթիվ շումերական գանգերը՝ պեղված Հարավային Միջագետքի Ալ-Ուբաիդ գյուղի մոտ: Ալ-Ուբաիդի գանգաբանական հավաքածուի բնորոշ հատկանիշներն են շեշտակի արտահայտված ցցուն քթոսկրերը, նեղ քիթը, երկարավուն նեղ դեմքը, ուղիղ ծնոտները, գանգի դոլիխոկրան (երկարագանգ) ձևը: Դրանք թվագրվում են մ.թ.ա. IV հազարամյակով և ավելի վաղ ժամանակներով: Նմանատիպ հատկանիշներով են օժտված նաև Հյուսիսային Իրանի Էլբուրսի լեռնաշղթայի Դամգանի շրջանից պեղված գանգերի հավաքածուները՝ Թեփե - Հիսար II և Թեփե - Հիսար III, թվագրված մ.թ.ա. IV-III հազարամյակներով:

Փոքր Ասիայի հյուսիսում՝ խեթերի հնագույն մայրաքաղաք Բողազ-Գյոյի մոտ գտնվող Ալիշար բնակավայրի մոտ, հայտնաբերվել է գանգերի մի հավաքածու, որն օժտված է եվրոպեոիդ հատկանիշներով և իր հիմնական ցուցանիշներով նմանվում է իրանական գանգերին:

Էնեոլիթի դարաշրջանին են վերաբերում ժամանակակից Հայաստանում՝ Ջրառատից պեղված՝ երկու տղամարդու և երկու կնոջ գանգերը: Մարդաբան Մ. Գ. Աբդուշելիշվիլու կարծիքով ջրառատյան գանգերի բնորոշ հատկանիշներն են գանգի միջին կլորության երկարավուն ձևը (դոլիխոմեզոկրան), քիչ շեղ ճակատը, քիչ արտահայտված վերունքային աղեղները, տափակ ծոծրակը, միջին բարձրության և լայնության դիմային կմախքը, շեշտակի արտահայտված քթոսկրերը՝ բարձր քթարմատով[10]: Էնեոլիթի և բրոնզե դարի չորրորդ շերտով են թվագրվում Շենգավիթ գյուղի մոտ գտնված չորս տղամարդու և մեկ կնոջ գանգերը: Աբդուշելիշվիլին կարծում է, որ Շենգավիթի գանգերը ջրառատյաններից տարբերվում են ավելի արտահայտված երկարագանգությամբ և ավելի բարձր դեմքերով, որը նրանց մոտեցնում է Վրաստանի տարածքից պեղված տկվիավիական գանգաբանական շարքին:

---

[10] **Абдушелишвили М. Г.** *Об антропологическом составе современного населения Армении (Антроп. сб. IV, Труды ин.-та этнографии АН СССР, т. 82, М., 1963, с. 3-27).*

Վերոհիշյալ գանգաբանական երկու հավաքածուներն ուսումնասիրել է նաև հայտնի ռուս գիտնական Վ. Ալեքսեևը: Նա կարծում է, որ բոլոր եվրոպեոիդ հատկանիշները, այն է՝ դեմքի հորիզոնական պրոֆիլավորումը, քթոսկրերի ուժեղ ցցունությունը, բարձր քթարմատը, բավական հստակ են արտահայտված: Շենգավիթի գանգերի ճակատոսկրերը զգալի լայն են, սակայն շատ ավելի փոքր շեղվածությամբ են օժտված, քան սովորաբար հանդիպում է համաժամանակյա գանգաբանական մյուս հավաքածուներում: Այդ առումով էնեոլիթի գանգերը նմանվում են Անդրկովկասի ժամանակակից բրախիկեֆալ (կլորագլուխ) տարբերակներին, հատկապես հայկական գանգերին[11]:

Առաջավոր Ասիայի տարածքում պեղված գանգաբանական նյութերի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սկսած մ.թ.ա. IV հազարամյակից և նույնիսկ ավելի վաղ ժամանակներից՝ այս տարածքում գերիշխել է հստակ արտահայտված եվրոպեոիդ ռասան և հատկապես նրա արմենոիդ տարբերակը: Արմենոիդ գանգերը բնութագրվում են ուժեղ բրախիկրանիայով (կլորագանգությամբ), բավական բարձր ակնախորշերով, քթոսկրերի խիստ ցցվածությամբ, սուր զիգո-մաքսիլյար (այտոսկրածնոտային) անկյունով, օրտոգնատ (ուղիղ) ծնոտներով, տափակ ծոծրակոսկրով, միջին լայնության դիմային կմախքով:

Այստեղ տեղին է խոսել մի հանգամանքի մասին, որը հաճախ շփոթմունք է առաջացնում ուսումնասիրողների մեջ: Դա բրախիկեֆալիզացիայի խնդիրն է: Կլորագանգությունը համարվում է էպոխալ տրանսֆորմացիայի (դարակազմիկ վերափոխության) արդյունք, որովհետև հնադարյան գանգերի ճնշող մեծամասնությունն օժտված է եղել դոլիխոկեֆալիայով (երկարագանգությամբ), իսկ ավելի ուշ շրջաններում արդեն գերիշխել են կլորագանգ ձևերը: Առաջավորասիական հնադարյան ոսկրանյութերի հայտնի ուսումնասիրող Մարիո Կապպիերին կարծում է, որ բրախիկեֆալացումը ներառում է էվոլյուցիոն զարգացման շարունակելի մի գործընթաց, որը պալեոլիթյան և նեոլիթյան բնակչության մեջ աստիճանաբար կազմավորել է որոշակի հարմարվողականությամբ օժտված խմբավորումներ, և որոնցում հետագայում կայունացել են անատոմիական և գործառութային որոշակի առանձնահատկություններ: Եթե որոշ ռասայագետներ բրախիկեֆալներին Առաջավոր Ասիայում բաժանում են 2 տարբեր ռասաների՝ արմենոիդ ու ալպիական, որոնք իրենց առաջացման կենտրոնից ուշ նեոլիթի և վաղ բրոնզի ժամանակաշրջաններում տարամիտվել են առանձին ուղղություններով, ապա Մ. Կապպիերին կարծում է, որ այդ երկու ձևերը ոչ թե առանձին ռասաներ են ժառանգաբանական իմաստով, այլ նույն ռասայական տիպի ձևաբանական տարբերակներն են[12]:

---

[11] **Алексеев В. П.** *Происхождение народов Кавказа, М., 1974, с. 84-85.*

[12] **Mario Cappieri.** *The Anatolians of the Late Neolithic and Chaltolithic Age. Tűrk Kurumu Belleten, Ekim, 1970, p. 518.*

Ուսումնասիրվող տարածքի բոլոր հնադարյան գանգերը՝ լինեն կլորագլուխ, թե երկարագլուխ, օժտված են դիմային կմախքի բոլոր այն հատկանիշներով, որոնցով բնութագրվում են արմենոիդները: Արմենոիդ մարդաբանական տիպի կազմավորման խնդիրներով երբևէ զբաղված բոլոր գիտնականները միասնական են այն հարցում, որ մարդու գանգի բրախիկեֆալացումը էպոխային փոխակերպման արդյունք է՝ ուղղորդված դեպի ավելի ուշ դարաշրջաններ: Այդ պատճառով չի կարելի երկարագանգ սուբյեկտներին առանձնացնել արմենոիդներից:

Թեև հնադարյան Առաջավոր Ասիայում շատ վաղ ժամանակներում մեծաքանակ էին երկարագլուխ ձևերը, սակայն հենց այս տարածքում էլ ընթացել է ժամանակակից կլորագլուխների (արմենոիդների) կազմավորումն ու կայունացումը: Վ. Ալեքսեևը կարծում է, որ պոպուլյացիաների արմենոիդ խումբը իր ծագումով կապված է Առաջավոր Ասիայի տարածքի հետ: Նրա կազմավորման ամենահավանական արեալները ժամանակակից Թուրքիայի և Իրանի տարածքներն են, իսկ ժամանակակից Հայաստանը կազմել է այդ շրջանի հյուսիսային ծայրամասը[13]:

Հայկական լեռնաշխարհում և հարակից շրջաններում արմենոիդ մարդաբանական տիպի անդրենածին լինելու գաղափարը իրենց բազմաթիվ ուսումնասիրություններում և տարբեր ժամանակներում հաստատել են այնպիսի կարկառուն դեմքեր, ինչպիսիք են Դեբեցը (1960)[14], Օշանինը (1957)[15], Աբդուշելիշվիլին (1963)[16], Կրոգմանը (1940)[17], Բունակը (1927, 1947)[18], Վալլուան (1938)[19], Լուշանը (1911)[20] և այլք:

Արմենոիդ տիպը հատկապես լայն ճանաչում է ստացել հնադարյան խեթիթների բնակատեղիների՝ Սենջիրլի և Բողազ-Գյոյ բնակավայրերի պեղումներից հետո: Այդ նյութը թույլ տվեց Լուշանին հաստատելու, որ խեթերի ֆիզիկական տիպը օժտված է եղել արմենոիդ բնույթի հատկանիշներով՝ տափակ ծոծրակով, շեղ ու թեք ճակատով, ուրույն ձևի ուռուցիկ քթով, միջին լայնության բարձր դեմքերով:

Հարավային Բաբելոնի Ուր և Քիշ բնակավայրերում հայտնաբերված են մ.թ.ա. III հազարամյակին վերաբերող շումերական ոսկրանյութեր: Ուր բնակավայրում երկարագանգ տարբերակներն իսպառ բացակայում են, իսկ Քիշում դրանք ներկայացված են որոշակի ձևափոխված տարբերակով: Ըստ Վ. Բունակի՝ արմենոիդ տիպի սերման հարցը իր էթնիկ և պատմական ձևակերպումներով հարում է

---

[13] **Алексеев В. П.,** *նշվ. աշխ., էջ 207:*

[14] **Дебец Г. Ф**. *Антропологический состав Гипы (Народы Кавказа, т. I, М., 1960, с. 26-32).*

[15] **Ошанин Л. В**. *Антропологический состав населения Ср.Азии и этногенез ее народов, т. I, Е., 1957, с. 147.*

[16] **Абдушелишвили М. Г.,** *նշվ. աշխ., h. 82, էջ 3-27:*

[17] **Krogman W.** *The Peoples of Early Iran and Their Ethnic Affinities. Journal of Physic. Anthrop. vol. 26, 1940, p. 25-36.*

[18] **Бунак В. В.** *Древнейшие краниологич. типы Пер. Азии (Краткие сообщ. Ин-та этногр., 11, 1947, "Crania Armenica". Труды НИИ Антроп., М., 1927, с. 76-79).*

[19] ***Vallois N.***, *Notes sur les ossements humains de Sialk.* **Girshman R**., *Foulles de Sialk, t. II, Paris, 1938, p. 22.*

[20] **Luschan F. K.** *The Early Inhabitants of the West Asia. Journal Anthrop, vol. 41, London, 1911, pp. 221-244.*

շումերների՝ այդ հնադարյան ամենաառեղծվածային ժողովրդի ծագումնաբանության խնդրին[21]:

Բացի շումերներից, արմենոիդ տիպին են պատկանել նաև աքքադները, խեթերը, խուրիները, հին Ասորեստանի բնակիչները և այլն: Այդ տեսակետի ապացույցներն են հարավային Միջագետքի Ալ-Ուբաիդ բնակավայրի՝ Բողազ-Գյոյիից ոչ հեռու գտնվող Ալիշար-Հյույուկ գյուղի գտածոները, որտեղ հստակ երևում է գլխի ցուցանիշի մեծացումը (պեղված 18 գանգերից 8-ը կլորագանգ էին, մնացածն օժտված էին որոշակի երկարագանգությամբ և իրենց կառուցվածքով հիշեցնում էին Քիշից հայտնաբերված տարբերակներին)[22]:

Էլբուրսի լեռնաշղթայի Դամգան շրջանում (մ.թ.ա. V-II հազարամյակը) հայտնաբերված հավաքածուի մեջ Կրոգմանը նույնպես փաստարկել է բրախիկրան տիպը: Իսկ դոլիխոկրան տիպը ներկայանում է երկու տարբերակով[23]: Լուրիստանում ոսկրանյութեր պեղվել են Թեփե-Ջիհյան, Թեփե-Ջամշիդի, Թեփե-Բադ Հորա բնակավայրերից, Ուրմիա լճից 11 կմ հարավ ընկած Հասանլու, Կասպից ծովի հարավային ափից 13 կմ հեռավորության վրա գտնվող Շահ Թեփե, Կենտրոնական Իրանի Թեփե-Սիալկ, Դամգանի Թեփե-Հիսար և այլ վայրերից[24]: Չափազանց մեծաքանակ են Փոքր Ասիայի տարածքի տարբեր բնակավայրերից ստացված ոսկրանյութերը (Բաբա-Գյոյ, Կումթեփե, Հիսարլիկ, Փոլաթլի-Հյոյուկ, Ահլաթբել, Յումյուկ Թեփե, Շեյխ Հյոյուկ, Թիլքի Թեփե, Օսմանհայասի, Ալասա Հյոյուկ, Ալիշար Հյոյուկ և այլն):

Ցավոք, հոդվածի սահմանները թույլ չեն տալիս մանրամասն նկարագրելու ոսկրանյութերի հետազոտման արդյունքները: Վերը շարադրված բոլոր պեղածո նյութերի օրինակները ապացուցում են այն փաստը, որ ողջ առաջավորասիական արեալը խայտաբղում է հարավեվրոպեոիդների հատկանիշներով օժտված մարդկային խմբերի հայտնաբերմամբ: Եթե հայ մարդաբանները զրկված են այդ ոսկրանյութերի ուսումնասիրման հնարավորությունից, ապա օտարազգի գիտնականների տվյալները շատ խոսուն ապացուցում են արմենոիդ մարդաբանական տիպի առկայությունը՝ գիտությանը հասանելի ժամանակներից սկսած:

Անդրադառնալով ժամանակակից Հայաստանի տարածքից ստացված նյութերին, որոնք ընդգրկում են վաղ բրոնզե դարաշրջանից մինչև անտիկ շրջանի ժամանակահատվածը, պետք է նշել, որ բոլոր ոսկրանյութերը մանրակրկիտ ուսումնասիրել են օտարազգի և հայ մարդաբանները: Սևանից, Լճաշենից, Շենգավիթից, Գետաշենից, Ակունքից, Քարաշամբից, Արթիկից, Կարմիրից, Արծվաքարից, Սարու-

---

[21] **Бунак В. В.,** *նշվ. աշխ., էջ 207:*

[22] **Krogman W. M.** *The Cranial Types from Alishar Hÿuÿuk, Orient. Inst. of Chicago, p. IV, N 30, 1937.*

[23] **Krogman W. M.** *Racial Types from Tepe Hissar, Iran, from the Date Fifth to Early Second Millennium, Neder. Akad. van Wetensch, N 2, Amsterdam, 1940a.*

[24] **Cappieri M.** *The Iranians of the Copper/Bronze Ages Field Research Project s. Cocount Grove, Miami, Florida, 1973, pp. 1-19.*

խանից, Կարճաղբյուրից, Շիրակավանից և այլ բնակավայրերից պեղված ոսկրանյութերի ուսումնասիրումը ցույց է տվել, որ բոլոր հավաքածուները ցուցաբերում են ներքին միակերպություն ու հատկանիշների ժառանգական հաջորդականություն: Այսինքն՝ հազարամյակների ընթացքում, բացի գլխի ցուցանիշի մեծացումից, որևէ էական փոփոխություն տեղի չի ունեցել արմենոիդների ռասայական կերպարում: Նույնիսկ ժամանակակից հայերի գանգաբանական նյութերը հնադարյան տարաժամկետ և տարաբնակ հավաքածուների հետ համեմատելիս որևէ տարբերություն չի հայտնաբերվում: Ժամանակակից հայերի գանգերի հավաքածուն գտնվում է Մոսկվայի համալսարանին կից Մարդաբանության ինստիտուտ-թանգարանի պահոցներում: Այդ նյութը Մեծ Եղեռնից հետո Մուշի վիլայեթի Բաքսան գյուղի մոտակայքից անձամբ հավաքել է Վ. Վ. Բունակը, խնամքով մաքրել, դասավորել է արկղերի մեջ և 1917 թ. ուղարկել Մոսկվա:

Մարդաբանական ուսումնասիրությունների համար այսօր օգտագործվում են բազմաթիվ ժամանակակից պոպուլյացիոն ծագումնաբանական մեթոդներ, որոնք 95% ճշգրտությամբ ցույց են տալիս հաշվարկների հավաստիությունը: Այդպիսի մեթոդներից է «ժառանգական հեռավորությունների» մեթոդը, որի իմաստը համեմատվող խմբերի կամ ժողովուրդների միջև ազգակցական կապերի բացահայտումն է: Ստացված արդյունքը կարող է գրավել 0-ից 1 միավորի մեծություն: Եթե համեմատվող խմբերի մեջ ժառանգական տարբերությունը բացակայում է, ապա ստացված արդյունքը մոտենում է 0-ական արժեքին, իսկ եթե խմբերը ծայրաստիճան հեռու են՝ մոտենում է 1 միավորի:

Ստորև ներկայացված աղյուսակում ժամանակակից հայերը համեմատվում են հնադարյան խմբերի հետ՝ ըստ գանգի յուրահատուկ հատկանիշների, որոնք կոչվում են «դիսկրետ» հատկանիշներ կամ հավելյալ ոսկրեր.

Ժամանակակից հայեր - Լճաշեն (վաղ-միջին բրոնզ) - 0.0071
Ժամանակակից հայեր - Արթիկ (ուշ բրոնզ) - 0.0073
Ժամանակակից հայեր.-.Ակունք (ուշ բրոնզ-վաղ երկաթ) - 0.0157
Ժամանակակից հայեր - Կարճաղբյուր (անտիկ շրջան) - 0.0126
Ժամանակակից հայեր - Շուշի (ուշ բրոնզ) - 0.0164:

Բոլոր համեմատվող խմբերի չափազանց սերտ ազգակցական կապը ակնհայտորեն երևում է ստացված արդյունքներում[25]: Եթե ապացուցված է, որ հատկանիշը ժառանգվում է ծնողական սերնդից երեխաների սերնդին, ապա այդպիսի հատկանիշների հետազոտումը մի ամբողջ պոպուլյացիոն համակարգի մեջ շատ ավելի ճշգրիտ արդյունքների է հասցնում, որովհետև համակարգի միջին արժեքները ներկայանալի ձևով արտահայտում են ընդհանուր գենոֆոնդի վիճակը: Պոպուլյացիոն

[25] **Кочар Н. Р.** *Армяне: преемственность антропологических маркеров и генетическая дифференциация в древних и современных популяциях [Биологический журнал Армении (այսուհետև՝ БЖА), т. XLIII, N 4, 1990, с. 269-277].*

գենետիկայի ժամանակակից մեթոդները այսօր թույլ են տալիս ուսումնասիրելու ժամանակակից խմբերի ժառանգական համալիրները և դրանց հիման վրա հետադարձ վերլուծություններ կատարելու և որոշելու հատկանիշի առաջացման տեղը, ժամանակը և ժառանգական հաջորդականությունը: Որովհետև մեր գեները կարծես թե ուղերձ են անցյալից: Երբ ուսումնասիրվում է ոսկրանյութը, ապա մենք չգիտենք, թե հայտնաբերված անհատն իր մահից հետո փոխանցե՞լ է արդյոք իր գեները հաջորդ սերունդներին: Իսկ ժամանակակից մարդուն ուսումնասիրելիս մենք հաստատ գիտենք, որ նրա գեներն իրենց նախնիներն են ունեցել: Հնագիտական պեղումներից ստացված նյութական նմուշները ցույց են տալիս միայն այն ժամանակը, երբ կտրվել է տվյալ բնակչության կյանքի թելը: Եթե հաշվի առնենք, որ գրավոր խոսքի տարբեր ձևերի ամենավաղ օրինակները վերաբերում են մ.թ.ա. V-IV հազարամյակներին, իսկ սերունդների վերափոխման տարիքը 20-25 տարեկանն է, ապա լեզվաբանական վերակառուցումները կարող են պատմել միայն մեզնից 200-250 սերունդներ առաջ ապրած մարդկանց կյանքի մասին: Հետևաբար մարդաբանական ժառանգաբանական հետազոտությունները ժամանակակից մարդկային խմբերում և նրանց գեների հետադարձ հաշվարկները շատ ավելի հաստատուն տվյալներ կարող են հաղորդել մեր անցյալից:

Վերը շարադրվածից ելնելով՝ հարկ ենք համարում բերել մի քանի օրինակ ժառանգաբանական հետազոտումների տարբեր ասպարեզներից, որոնց արդյունքները անվերապահորեն ժխտում են հակահայկական այն տեսակետները, թե հայերը կազմավորվել են ոչ վաղ անցյալում եկվոր մի քանի խմբերից, որևէ ժառանգական միակերպություն չեն ցուցաբերում ու շատ տարբեր են ռասայական առումով:

Էվոլյուցիոն և պոպուլյացիոն ծագումնաբանական հետազոտություններում այսօր բավական հաճախ օգտագործվում է արական ճյուղով ժառանգվող Y քրոմոսոմը: Y քրոմոսոմի տարբեր հատվածներ ենթարկվում են տարբեր արագությամբ ընթացող մուտացիաների (շեղումների): Այն հատվածները, որոնք օժտված են մուտացիաների մեծ արագությամբ, կոչվում են կարճ տանդեմային կրկնություններ (ԿՏԿ), որոնք օգտաբեր են որոշակի էվոլյուցիոն երևույթների բացահայտման համար: Հայ մարդաբանները ուսումնասիրել են 794 պատահականորեն ընտրված անհատների ԴՆԹ-ն՝ ստացված բերանի քսուկներից: Նյութերը հավաքվել են Վանաձորում, Սյունիքում, Արարատում և Արցախում: Եվս 92 անհատ ուսումնասիրվել է Լոնդոնի հայ համայնքում: Համեմատության համար նույն չափանիշների արդյունքները վերցվել են հյուսիսարևմտյան Աֆրիկայի, կատալոնացիների, բասկերի ԴՆԹ-ները հետազոտած հեղինակներից: Հաշվարկները ցույց են տվել, որ հայկական խմբերն օժտված են ժառանգական տարբերակների ամենափոքր արդյունքներով, ինչը պայմանավորված է հայկական բոլոր խմբերի ժառանգական մերձակցությամբ: Y քրոմոսոմի միկրոսատելիտների ժառանգական բազմազանության բաժինը համեմատվող խմբերի

մեջ ամենափոքրն է: Դա ցույց է տալիս, որ հայկական խմբերը, տարբերվելով աշխարհագրական առումով, էթնիկապես կամ ռասայական տեսակետից մնում են միատարր[26]:

Հայկական ենթապոպուլյացիաների բացառիկ ժառանգական մերձակցությունը ապացուցվել է նաև հեմոտոլոգիայի բնագավառում: Պրոֆեսոր Վ. Ներսեսյանի բազմաթիվ հետազոտություններն արտացոլում են Հայաստանի տարածքում և Հայաստանից դուրս գրտնվող բոլոր հայկական խմբերի ժառանգական ընդհանրությունը՝ ըստ արյան իմունոլոգիական հատկանիշների: Տասնամյակների ընթացքում կատարված աշխատանքները ցույց են տվել, որ արյան բոլոր հատկանիշները (ABO, HLA, Rh-Hr, MNS, Duffy, Kidd, Kell-Cellano, Lewis, Lutheran, Diego, Gm, Inv և այլն) համարյա միատեսակ են բոլոր հայկական խմբերում[27]:

Ռասայագիտական հետազոտությունների մեջ այսօր մեծ տեղ է տրվում նաև օդոնտոլոգիական (ատամնաբանական) տվյալներին, որոնք նույնպես խիստ ժառանգական են, հետևաբար թույլ են տալիս ռասաախտորոշիչ նշանակության եզրահանգումներ անել:

Հայերի օդոնտոլոգիական ուսումնասիրություններն իրագործել է մասնագետ Վ. Կաշիբաձեն՝ հենվելով մեր հավաքած ատամնաբանական նյութերի վրա:

Հայերի տարբեր էթնոտարածքային խմբերի ծայրաստիճան մոտիկությունն արտահայտվել է նաև հատկանիշների այս համակարգում: Ընդ որում, նման միատարրություն հայտնաբերվել է նաև ժամանակակից և հնադարյան հայկական խմբերի միջև: Համեմատություններ են կատարվել Վրաստանում ու Հայաստանում բնակվող 15 հայկական խմբերի և 14 վրացական, 12 ադրբեջանական, երկու հունական և մեկ ասորական խմբերի միջև: Արդյունքները ցույց են տվել, որ համեմատվող ժողովուրդներից հայերին ամենամոտն են Տետրիցկարոյի շրջանի հույները[28]: Այս արդյունքը համահունչ է դերմատոգլիֆիկայի ասպարեզում ստացված մեր արդյունքների հետ: Համեմատելով հայերին այլ ժողովուրդների հետ վերը նշված «ժառանգական հեռավորությունների» մեթոդով՝ մենք ստացել ենք ամենափոքր հեռավորությունը հայերի և հույների, հատկապես՝ կիպրոսաբնակ հույների միջև (θ = 0.0248)[29]: Եթե հիշենք, որ մարդկության պատմության տեսակետից ոչ հեռու անցյալում Կիլիկիայի թագավորությունն ու Կիպրոս կղզին տարածքայնորեն մոտ են եղել և

---

[26] **Епископосян Л. М.** *Изменчивость коротких тандемных повторов у хромосомы человека (Генетика, т. 37, N 8, 2001, с. 1112-1117).*

[27] **Нерсесян В. М.** *Распределение антигенов системы HLA в популяции армян (Генетика, т. 38, N 7, 2002, с. 1001-1005).*

[28] **Кашибидзе В. Ф.** *Одонтология армян (БЖА, т. XLIII, N 4, 1990, с. 285-295).*

[29] **Քոչար Ն.,** *Հայ ժողովրդի ծագման, կազմավորման և գոյատևման մասին (Ֆյունիկ, N 8, 1990, էջ 19-20):*

փոխադարձ խաչասերումների հավանականությունը մեծ է եղել, ապա ժառանգական նմանությունը հայերի և հույների միջև բավական տրամաբանական է:

Այստեղ մենք միտումնավոր չենք ներկայացնում բոլոր այն բազմաթիվ բանաձևերն ու հաշվարկային մեթոդները, հատկանիշների հաշվարկման գործակիցներն ու ծավալուն աղյուսակները, որոնց օգնությամբ ընդհանրապես կատարվում են մարդաբանական հետազոտությունները: Նախ այն պատճառով, որ լայն ընթերցողի համար անհասկանալի ու բարդ կթվան դրանք, իսկ մանրամասներով հետաքրքրվողները բոլոր տվյալները կարող են գտնել հղված գրականության մեջ: Մեր նպատակն է ծանոթացնել մարդաբանության տարբեր ոլորտների այն բոլոր արդյունքներին, որոնք հստակ ներկայացնում են արմենոիդ տիպի առանձնահատկությունները, նրա անդրենածին լինելու փաստն իր բնօրրանում, հատկանիշների ժառանգական անընդհատությունն ու ժամանակակից խմբերի ծայրաստիճան մոտիկությունը: Այդ առումով վրաց մարդաբան Մ. Աբդուշելիշվիլին, որը XX դարի 60-ական թվականներին ուսումնասիրել է հայերի հիմնական էթնո-տարածքային խմբերի ձևաբանական հատկանիշները (20-60 տարեկան 100-ական տղամարդու, ընդամենը 21 խումբ), եկել է այն համոզման, որ բոլոր հայկական միկրոպոպուլյացիաների հիմքում ընկած մեծ նմանությունները խոսում են փոքրասիական և առաջավորասիական տարածքներում արմենոիդ տիպի գերիշխող դերի մասին: Հակառակ դեպքում այդ խմբերից յուրաքանչյուրն ավելի ուժեղ դոմինանտի ազդեցության տակ, փոխելով իր մարդաբանական տիպը, գոնե չնչին շեղումներ կբերեր ելակետային տիպից: Իսկ այդ երևույթն էլ իր հերթին, ի վերջո, կտարբերակեր այդ խմբերն ինչպես իրարից, այնպես էլ հնադարյան հայ բնակչությունից[30]:

Ուսումնասիրելով ժամանակակից հայերի քսան էթնո-տարածքային խմբերում այնպիսի հաստատուն ժառանգական հատկանիշներ, ինչպիսիք են ձեռնաթաթի մաշկի գծանկարները (դերմատոգլիֆիկա), որոնց միջինացված պատկերն ավելորդ անգամ ապացուցում է հայերի «արմենոիդ» ռասայական պատկանելությունը, մենք փորձել ենք վերակառուցել այն ժամանակը, երբ կազմավորվել են հայերին բնորոշ ռասայական առանձնահատկություններն իրենց բնակեցման արեալում: Դրա համար օգտագործվել են նաև ուսումնասիրված խմբերի ժողովրդագրական տվյալները, որոնք թույլ են տվել հաշվարկելու պոպուլյացիաների էֆեկտիվ և էֆեկտիվ-ռեպրոդուկտիվ չափսերը, ազգանվային կառուցվածքը և դրա ժառանգման ձևերը, սերունդների միգրացիոն պատկերը (ուղիղ և հետադարձ միգրացիաներ) և այլ պարամետրեր: Մեր տրամադրության տակ ունենալով նմանօրինակ ժառանգման տեղեկատվություն և օգտագործելով գենային հաճախականությունների տարբերակների արդյունքները՝ կարողացել ենք հաշվարկել հայկական պոպուլյացիայի տարբերակման ժամանակակից մակարդակին

---

[30] **Абдушелишвили М. Г.,** *նշվ. աշխ., էջ 3-27:*

հասնելու ժամանակը: Հենվելով պոպուլյացիոն գենետիկայի մեջ ընդունված հաշվարկների հայտնի մեթոդների վրա[31] ՝ օգտվել ենք հետևյալ բանաձևից՝ $f_0 = f_e(1-e^{-T/N_e})$, *որտեղ T-ն սերունդների վերափոխման արագության աստիճանն է, այսինքն՝ սերունդների այն քանակը, որը մեզ է հասցրել հազարավոր տարիների ընթացքում կուտակված ժառանգական բազմաձևությունը,* f_0*-ն ուսումնասիրված ձեռնամաշկային հատկանիշների ստանդարտիզացված վարիանսն է,* f_e*-ն միգրացիոն գործակիցը,* N_e*- էֆեկտիվ-ռեպրոդուկտիվ չափը:*

Ստացված սերունդների քանակը (T) բազմապատկելով սերնդափոխման միջին տարիքի հետ (t), որը հայկական խմբերում հասնումէ 27 տարեկանի, մենք ստանում ենք այն ժամանակը, երբ կազմավորվել են մարդկային հետազոտվող ռասայական հատկանիշները: Հայկական միացյալ խմբի համար, որի էֆեկտիվ չափը հասնում է 442 մարդու, մենք ստացել ենք 40-50 հազար տարիների ժամանակահատված, իսկ առանձին էթնոտարածքային խմբերի համար, որոնց էֆեկտիվ-ռեպրոդուկտիվ միջին չափը հասնում է 49 մարդու, մենք ստացել ենք 8-9 հազար տարիների ժամանակահատված[32]: Նշանակում է, որ մարդու արմենոիդ հատկանիշները կազմավորված են եղել արդեն մեզնից 40-50 հազար տարիներ առաջ, այսինքն՝ վերին պալեոլիթում, երբ ի հայտ է եկել կրոմանյոնյան մարդը – Homo Sapiens-ը: Իսկ մայրական նախախմբից արմենոիդների տարամիտումը դեպի տարբեր կողմեր իրականացել է նեոլիթյան ժամանակներում՝ մեզնից 8-9 հազար տարիներ առաջ:

Որպես վերջաբան՝ կուզեի խոսել մի շատ կարևոր հանգամանքի մասին: Այն է՝ «արմենոիդ» եզրույթի հանդեպ ժամանակակից մարդաբանների անհանդուրժող դիրքի մասին:

«Արմենոիդ» եզրույթը առաջին անգամ 1911 թ. առաջարկել է գերմանացի պրոֆեսոր Ֆոն Լուշանը: Ըստ նրա՝ մարդաբանական բազմաթիվ կնճռոտ խնդիրների բացահայտման համար չափազանց կարևոր են Առաջավոր Ասիայի տարածքում լայն տարածում ստացած խոր հնությանը պատկանող և յուրօրինակ հատկանիշներով օժտված արմենոիդների ուսումնասիրությունները[33]: Այնուհետև գերմանական գրականության մեջ սկսեց օգտագործվել «առաջավորասիական տիպ» հասկացությունը: Այն փոխառնվեց XX դ. խորհրդային մարդաբանական դպրոցի գիտնականների կողմից, որոնք նախընտրեցին այս վերջին տարբերակը՝ համարելով, որ «արմենոիդը» զուտ ազգային պատկանելություն է արտացոլում և չի բնորոշում այդ ռասայական տիպին պատկանող մյուս առաջավորասիական ժողովուրդներին[34]:

---

[31] **Rychkov, *Sheremetyeva***, *The Genetic Process in the System of Ancient Human Isolates in North Asia, Cambridge Univ.Press, 1977, pp. 47-108.*

[32] **Кочар Н. Р**. *Антропология армян. Дерматоглифика и популяционная структура, Е., 1989, с. 104.*

[33] **Luschan F. K.** *The Early Inhabitations of the Western Asia. J. Anthrop. Inst. Vol. 41, London, 1911, pp. 221-224.*

[34] **Алексеев В. П.** *նշվ. աշխ., էջ 83-108:*

Ճանաչված ռուս գիտնական, "Crania Armenica" դասական աշխատության հեղինակ Վ. Բունակը «արմենոիդ» տերմինի կողմնակիցն էր, քանզի այդ անվանումը արտացոլում է ռասայի առավելագույն արտահայտվածության շրջանը՝ Հայաստանը, Առաջավոր Ասիայում նրա տարածման կենտրոնական գոտին: Սակայն այն փաստը, որ տերմինը համընկնում է հայ ժողովրդի էթնիկ անվանման հետ, կարող է հասցնել հասկացությունների անցանկալի աղավաղման: Այդ պատճառով առաջարկվում էր տիպն անվանել «պոնտո-զագրոսյան» ռասա՝ Սև ծովի և Զագրոսի լեռնաշղթայի անվանումներով, որոնց սահմաններում գերիշխում է այդ տիպը[35]: Սակայն Բունակը, իր հետագա աշխատություններում շարունակում էր օգտագործել «արմենոիդ տիպ» անվանումը: Մեր խորին համոզմամբ «արմենոիդ» անվանումը առավելագույն հաջողված տարբերակն է Առաջավոր Ասիայի և Հարավային Կովկասի տեղաբնիկ բնակչությանը բնութագրելու համար, քանի որ արմենոիդ ժառանգական համալիրով օժտված բազմաթիվ էթնիկ խմբերի կազմավորման բնօրրան է հանդիսացել հայկական լեռնաշխարհը, որն օտարներն էին անվանում "Армянское нагорье", "Armenian Highland"՝ անկախ «հայ» ինքնանվանումից: Հետևաբար թե՛ աշխարհագրական և թե՛ էթնիկ պատմության տեսանկյուններից «արմենոիդ» տերմինը լրիվ համապատասխանում է այն ռասայագետների պահանջներին, որոնք կարծում են, որ ռասաների անվանումը պետք է որոշել՝ ելնելով բնակեցման արեալների աշխարհագրական անվանումներից: Մարդկային ռասաների դասակարգման մեջ մենք հանդիպում ենք այնպիսի նոմենկլատուրաների, ինչպիսիք են «էսկիմոսային ռասա», «բուշմենական ռասա», որոնք, չգիտես ինչու, ռասայագետների մեջ որևէ անհանգստություն չեն առաջացնում: Բացի դրանից, արմենոիդ տիպը մտնում է բալկանո-կովկասյան ավելի մեծ ռասայական խմբավորման մեջ, որի անվանումը հստակ արտացոլում է ռասայի աշխարհագրական տարածվածության շրջանը: Իսկ Առաջավոր Ասիա աշխարհագրական տարածքի մեջ մտնում է նաև արաբական թերակղզին, որտեղ, հատկապես նրա կենտրոնական և հարավային շրջաններում, ի սկզբանե բնակվել են բոլորովին այլ ռասայական տիպով օժտված մարդկային խմբեր: Իրանական Բելուջիստանում մեկրաններն օժտված են նեգրոիդ հատկանիշներով, Հադրամաուտի բեդվինները մոտենում են վեդդոիդ ռասային, Աֆղանստանի հեզարացիների մոտ վառ արտահայտված են մոնղոլոիդ հատկանիշները և այլն[36]: Դրանք բոլորը առաջավորասիական ժողովուրդներ են և որևէ կապ չունեն արմենոիդ ռասայի հետ:

Արմենոիդ ռասայական տիպը բնութագրվում է հետևյալ ձևաբանական հատկանիշներով. թուխ մաշկ, գլխի բրախիկեֆալ ձև (կլորագլուխ), քիչ ալիքավոր, փափուկ սև կամ մուգ գույնի մազեր, առատ կամ շատ առատ մազածածկույթ մարմնի վրա, բեղ-

---

[35] **Бунак В. В.** *Crania Armenica (Труды НИИ Антроп. при МГУ, вып. II, М., 1927, с. 40).*

[36] **Рогинский Я. Я., Левин М. Г.,** *նշվ. աշխ., էջ 417:*

մորուքի առատ աճ, դեմքի ուժեղ պրոֆիլավորում, խիստ արտահայտված երկար արծվաքթեր, շեղ կամ ուղիղ ճակատ, տափակ ծոծրակ, մուգ կամ խառը գույնի աչքեր, միջին կամ միջինից բարձր հասակ: Հատկապես աչքի է ընկնում քթի ուրույն ձևը՝ կախված քթածայրով և շեղակի դասավորված նեղ քթանցքերով:

Ժամանակակից ժողովուրդների շրջանում այդ տիպով են օժտված հայերը՝ ճնշող մեծամասնությամբ, ասորիները, հարավային ու արևելյան վրացիների մի մասը, Սիրիայի ու Լիբանանի արաբականացած որոշ խմբեր, Պամիրի լեռնաշղթայում բնակվող մի քանի մեկուսացած էթնիկ խմբեր՝ ռուշանցիները, շուգնանցիները, յազգուլեմները[37], ինչպես նաև Իրաքի հարավում, Տիգրիս և Եփրատ գետերի ստորին հոսանքների ճահճուտներում բնակվող մարդկանց մի շատ հետաքրքիր խումբ, որոնք իրենց կոչում են մոադան՝ «ճահճային մարդիկ», և հին շումերների անմիջական հետնորդներն են համարվում: Արմենոիդ հատկանիշներով են օժտված նաև մի շարք հարավեվրոպեոիդ խմբեր՝ հույները, հարավային իտալացիները, հարավային ֆրանսիացիները, չեռնոգորցիները, բասկերը և այլք, որոնց թեև ալպիական ռասայի մեջ են, սակայն մարդաբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ալպիական ռասան՝ դինարական ռասայի հետ, արմենոիդ ռասայի լոկալ տարբերակներն են:

Գ. Դեբեցը կարծում է, որ այն դեպքերում, երբ առաջավորասիական (արմենոիդ) հատկանիշները հայտնաբերվում են այնպիսի ժողովուրդների մեջ, որոնց լեզվի կամ մշակույթի կազմավորումը կապված է Առաջավոր Ասիայի տարածքներից դուրս ընկած շրջաններին, կարելի է պնդել, որ մարդաբանական տվյալները խոսում են առաջավորասիական ենթաշերտի մասին: Իսկ ինչ վերաբերում է հայերին, կարելի է հաստատակամորեն խոսել նրանց էթնոծագումնաբանության մեջ զգալի դեր խաղացած այնպիսի էթնիկ տարրերի մասին, որոնք նախորդել են Առաջավոր Ասիայում հնդեվրոպական լեզուների տարածմանը: Փաստորեն, հայերի մարդաբանական կերպարում չի բացահայտվել մի որևէ տարր, որը կարելի լինի Առաջավոր Ասիայում հնդեվրոպական լեզուների տարածման ժամանակներում կամ դրանից հետո ներթափանցած համարել[38]:

Եթե անդրադառնանք լեզվաբանների հնդեվրոպական լեզուների նախահայրենիքի տեղի հայտնի վերականգնմանը՝ Փոքր Ասիայի հյուսիս-արևելքում-Միջագետքի հյուսիսում և այդտեղից հնդեվրոպական լեզուների միգրացիային դեպի աշխարհի տարբեր կողմերը, ապա լեզվական միգրացիաների ու արմենոիդ ռասայական տիպի տարածման հետագծերի համընկնումը տրամաբանական է դարձնում արմենոիդների ներկայությունը աշխարհի տարբեր ծալքերում:

---

[37] **Рычков Ю. Г.** *Антропология и генетика изолированных популяций, 1969, с. 221.*

[38] **Дебец Г. Ф.** *Заселение южной и Передн. Азии по данным антропологии (Происхождение человека и древних расселений человечества, М., 1951, с. 366.*

ВОПРОСЫ ГЕНЕЗИСА АРМЕНОИДНОГО РАСОВОГО ТИПА НА ТЕРРИТОРИЯХ АРМЯНСКОГО НАГОРЬЯ И СОПРЕДЕЛЬНЫХ РЕГИОНОВ

КОЧАР Н. Р.

Резюме

Костные остатки разных форм эволюционного развития человека убеждают в том, что Армянское нагорье можно отнести к областям формирования человека разумного.

Результаты археологических раскопок на территории Передней Азии показали, что начиная с IV тыс. до н.э. и более ранних эпох в этом ареале доминировала европеоидная раса, особенно ее арменоидный вариант. Богатые палеоантропологические материалы, выявленные из могильников Севана, Лчашена, Шенгавита, Геташена, Акунка и др. поселений, явствуют о том, что во всех коллекциях наблюдается внутреннее сходство и преемственность генетических признаков. Антропологическое изучение разных групп армянского народа очень важно для выяснения вопросов происхождения и этнической истории армян. Антропологические (расовые) признаки генетически детерминированы и передаются в цепи поколений в течение тысячелетий, что дает возможность путем сравнительного анализа антропологического материала производить ретроспективные расчеты. Сравнение современных субэтнических групп выявляет генетическую преемственность, метисацию и генетические связи. В связи с изложенным особую ценность являют собой костные материалы из могильников разных территорий Армении. Весьма важным представляется также изучение признаков современных субэтнических групп.